Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 17 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Օրորոց» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ գյուղի միջնակարգ դպրոցի համակարգչային դասարանի կահավորում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գյումրու հայորդաց տան կահույքի գնման», «Վաչե և Թամար Մանուկյաններ » մատենադարանի համար կահույքի գնման» ծրագրերը.

«Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբլաբ-ուսումնական առարկայական լաբորատորիաներ-Վաղարշապատ» ծրագիրը.

«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բաեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2012 թվականի ընթացքում իրականացվող Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի եռահարկ մասնաշենքում վերելակի հորանի կառուցման, վերելակի առքի, տեղադրման և գործարկման» ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի քսան համայնքների երեխաների համար քրիստոնեական ամառային ճամբարի անցկացում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների համայնքների երեխաների համար քրիստոնեական ամառային ճամբարի կազմակերպում», «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ճոճկան, Ջիլիզա և Կաճաճկուտ համայնքներին», «Շինաարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Աքոր և Քարինջ համայնքներին», «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա, և Այրում համայնքներին», «Շինաարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Ձորագլուխ և Նիգավան համայնքներին» և «Հայաստանի Հանրապետու-թյան Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր և Ծովակ համայնքների մանկապարտեզների վերանորոգում » ծրագրերը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակելի տան վերանորոգում», «Սանհանգույցի և խոհանոցի վերանորոգում» և «Սանհանգույցի վերանորոգում» ծրագրերը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: